յորոց զմեծամեծ տուգանս առցէ եւ պատ-
ժեսցէ։„

Այստեղ կ'աւանդուի՝ թէ "Գերմանն„ Գալուստ "փայեկին„ ձեռօք Էջմիածին հասած էր. "որոյ էին եւ չորս օրինակք, որք առաւել այնր աղագաւ, զի թէ չէք Գէորգն եւ չար սեւագլուխքն փախուցեալք իցեն անտի ի յայլ երկիրս, յղեսցին օրինակքս ի ձեռն այնց տեղեաց բռնաւորացն ուր եւ իցեն Նոքա. զի ի սուրբ Աթոռս աքսորեսցին։ Իսկ՝ զմիւս խնդրեալ Գերմանն սրբազան վեհին, որ հասարակ ի վերայ ամենայն փաշայից եւ բռնաւորաց եւ դատաւորաց լինելոց էր, վասն պիղծ ախթարմայիցն դարձեալ (զի ուր եւ գտանիցեն, ընդ ծանր լծով եւ տուգանիւք դիցեն եւ չարչարեսցեն), զայն յետոյ հոգալոց էր եւ ընդ իւր բերելոց։„

Սակայն Գէորգ Եպս. ինչպէս կը յիշուի Ցիշատակարանին 1765 Յուլիս 20ի արձանագրութեան մէջ (էջ 250, Ջամբռ, 41), լսելով որ Սիմէոն իրեն դէմ "Գերման„ հանել կուտայ, Ախալցխայէն մեկնած էր, եւ Եւդոկիոյ վրայէն Պոլիս հասած, ուր Պատրիարք էր Գրիգոր Ծ. Վ. Պասմաճեան (ընտր. 13 Մայ. 1764)։ Սիմէոն կաթողիկոս զԳրիգոր Պատրիարք հրաւիրելով Էջմիածին ի ձեռնադրութիւն եպիսկոպոսութեան՝ կը գրէ անոր, որ "հանեալ յարքունուստ զԳերման կամ ի սուրբ Աթոռս առաքեսցեն (զԳէորգ Եպ.) մնալ աստ մշտապէս, եւ կամ յայլուր ի յանել տեղի ինչ աքսորեսցեն։